

Տոկոսագումարների հաշվարկման կարգը

Ուշադրություն՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՏԱՐԵԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՆՈՒԻՏԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԶՍՓ ՄԱՐՄԱՆ /ԼՎԱԶՈՂ/ԵՂԱՆԱԿՈՎ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ և ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

Ամսական հավասարաչափ (անուիտետային) մարումներով գրաֆիկի դեպքում, վարկի մարումները հաշվարկվում են հետևյալ բանաձևի համաձայն.

$R = P \times r / (1 - (1 + r)^{-n})$, որտեղ՝

R - Վարկի ամսական վճարումն է:

P - Վարկի գումարն է:

n - Վարկի ամբողջ ժամանակահատվածի համար վարկային վճարումների ընդհանուր թիվն է (ամիսների քանակը):

r - Վարկի ամսական տոկոսադրույքը, որը հավասար է Վարկի տրամադրման պահին Պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքի 1/12 մասին:

Ամսական վճարումների կազմում Վարկի պարտքի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի հաշվարկմամբ.

$Pt = R \times ((1 - (1 + r)^{-n}) / r)$ բանաձևով, որտեղ՝

Pt - Վարկի փաստացի մնացորդն է t ժամանակահատվածի վերջում:

R - Վարկի ամսական վճարումն է:

t - Վճարումների քանակն է, որոնք պետք է կատարվեն մինչև Վարկի օգտագործման ժամկետի ավարտը (ամիսների քանակը):

r - Վարկի ամսական տոկոսադրույքն է, որը հավասար է Վարկի տրամադրման պահին Պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքի 1/12 մասին:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1 + i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A - կրեդիտի գումարը /կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը/

n - կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը

K_n - կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը

D_n - կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը, որը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

- 1) Հիպոտեքային վարկի օրինակ 1.
 - Տրամադրվող գումար՝ 22.500.000 ՀՀ դրամ
 - Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 8%
 - Մարման ժամկետ՝ 120 ամիս
 - Վարկի եւ տոկոսագումարի մարում՝ ամսական անուիտետ եղանակով
 - Հաճախորդի կոմից կատարվող **այլ վճարումներ**
 - Վարկի տրամարման նվազագույն միջնորդավճար՝ 0.5 % - 112,500 դրամ
 - Գրավադրվող գույքի գնահատման վճար – 15,000 դրամ
 - Նոտարական միանվագ միջնորդավճար – 20,000 դրամ
 - ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտե – 71,400 դրամ

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 8.91%:

- 2) Հիպոտեքային վարկի օրինակ 2.
 - Տրամադրվող գումար՝ 15.000.000 ՀՀ դրամ
 - Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 10.5%
 - Մարման ժամկետ՝ 120 ամիս
 - Վարկի եւ տոկոսագումարի մարում՝ ամսական անուիտետ եղանակով
 - Հաճախորդի կոմից կատարվող **այլ վճարումներ**
 - Վարկի տրամարման նվազագույն միջնորդավճար՝ 1 % - 150,000 դրամ
 - Գրավադրվող գույքի գնահատման վճար – 15,000 դրամ
 - Նոտարական միանվագ միջնորդավճար – 20,000 դրամ
 - ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտե – 71,400 դրամ

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 11.86%:

- 3) Հիպոտեքային վարկի օրինակ 3.
 - Տրամադրվող գումար՝ 20.000.000 ՀՀ դրամ
 - Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 11.5%
 - Մարման ժամկետ՝ 120 ամիս
 - Վարկի եւ տոկոսագումարի մարում՝ ամսական անուիտետ եղանակով
 - Հաճախորդի կոմից կատարվող **այլ վճարումներ**
 - Վարկի տրամարման նվազագույն միջնորդավճար՝ 1 % - 200,000 դրամ
 - Գրավադրվող գույքի գնահատման վճար – 15,000 դրամ
 - Նոտարական միանվագ միջնորդավճար – 20,000 դրամ
 - ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե – 71,400 դրամ

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 12.93 %:

- 4) Հիպոտեքային վարկի օրինակ 4.
 - Տրամադրվող գումար՝ 25.000.000 ՀՀ դրամ
 - Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 22%

- Մարման ժամկետ՝ 60 ամիս
- Վարկի եւ տոկոսագումարի մարում՝ ամսական անուիտետ եղանակով
- Հաճախորդի կոմից կատարվող այլ վճարումներ՝
 - Վարկի տրամարման նվազագույն միջնորդավճար՝ 2 % - 500,000 դրամ
 - Գրավադրվող գույքի գնահատման վճար – 15,000 դրամ
 - Նոտարական միանվագ միջնորդավճար – 20,000 դրամ
 - ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե – 71,400

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 26.07%:

Ուշադրություն. ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ ՈՐԻ ՄԱՍԻՆ ՎԱՐԿԱՌՈՂՆ ՆԱԽԱԴԵՍ ՏԵՂԵԿԱՑՎՈՒՄ Է: